ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IEC6-13BB-4D29-A849 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ԵԴ2/12990/02/25

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

19 դեկտեմբերի 2025թ.
ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «Ավետիս-Խեցի» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի՝ թիվ «ԼՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-23/7» ծածկագրով գնման պայմանագրի միակողմանի 19.11.2025թ. լուծումն անվավեր ճանաչելու և «Ավետիս-Խեցի» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 28.11.2025թ. թիվ 1886-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Ավետիս-Խեցի» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2025թ. դեկտեմբերի 3-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի՝ թիվ «ԼՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-23/7» ծածկագրով գնման պայմանագրի միակողմանի 19.11.2025թ. լուծումն անվավեր ճանաչելու և «Ավետիս-Խեցի» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 28.11.2025թ. թիվ 1886-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Դատարանի 2025թ. դեկտեմբերի 10-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Որոշումը ստանալուց հետո հայցադիմումը սահմանված ժամկետում կրկին ներկայացվել է դատարան:

Կրկին ներկայացված հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2025թ. հոկտեմբերի 15-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2025թ. հոկտեմբերի 16-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Հետևաբար՝ հայցադիմումը դատարանում պետք է ընդունված համարել 2025թ. դեկտեմբերի 3-ին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ավետիս-Խեցի» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի՝ թիվ «ԼՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-23/7» ծածկագրով գնման պայմանագրի միակողմանի 19.11.2025թ. լուծումն անվավեր ճանաչելու և «Ավետիս-Խեցի» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 28.11.2025թ. թիվ 1886-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Հայցադիմումը համարել դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 2025թ. դեկտեմբերի 3-ին:

Թիվ ԵԴ2/12990/02/25 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026թ. հունվարի 16-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2025.12.19 14:46:44 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am